


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԽԵՎ ԿԱՐՈՒ ՄԵ Ե ԳՈՐԾԻՆԻՑ
ՊԵՏԵ Ե ՈՒՂՂՆԵՒ ԱՌ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱՅԻՐԷ (Հասցիայով)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՊՈՍՈՒ ՆԱՄԱՐ	
Տարեկան, ուղղ դանկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՊԿԵՐՆԵՐ	
Տարեկան ծրանք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ Ե
ԵՒ ԹՂՐԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ շնորհակալութիւնք:

ԿԷՍ ԴԱՐԻ ՉԱՓ ԱՌԱՋ ԵՒ ԱՅՍՈՐ

Անանկական օրէնքներու անորոշութեան մէջ, հայ ժողովուրդին դժբաղդ ճակատագիրը, հողմոց քմահաճոյքին յանձնուած պիտո՞ւի նաու մը նման, երկար ու ձիգ տարիներ տարուբերելէ ետեւ նազան աննպաստ հանգամանքներու տակ դնելէ, զգալի կերպով իր թիւը նոսրացնելէ վերջ, կը հասնի թուականի մը, յորում իր ուշիմութեան շնորհիւ թէ՛ մտաւոր զարգացումի, թէ՛ քիչ շատ անտեսական վիճակի բարեօրման եւ թէ՛ հետզհետէ քաղաքական առաւելութիւններ ձեռք ձգելու երբեակ տեսակէսներով, բաւական կարեւոր գիրք մը գրաւելու վիճակին մէջ կը գտնուի:

Պատմական շատ մը նշանաւոր անցքերու վրայ կանգ առնել զանց ընելով, համառօտակի պիտի ներկայացնենք միայն Կ. Պօլսոյ պատրիարքութեան հաստատման թուականէն-1461, մինչև մեր նշանակած թուականը:

Պատրիարքութեան գահը ծախու առնել ուղղ ժառանգելու կախիկ պայմաններու ստուար թիւը, կամապաշտ ամիրաներու պատրիարքական գահուն շուրջ իրենց ընտրելիները յաջողեցնելու համար առաջ բերած մըրցումը, հայ ժողովրդեան եւ զինքը կառավարելու կոչուած անձնաւորութեանց մէջ յարաբերութեանց ցրտութիւն պատճառելով հեռացուցած էր մէկ մէկէ, որուն համար հայ ժողովուրդի զարգացման ծաւալը սահմանափակուած էր եւ այսպէս տարիները իրարու կը յաջորդէին . . . :

Հայ ազգի յառաջդիմութեան քայլերը սրչափ ալ գանգաղ լինէին, մտածեցած էր սակայն ժամանակը, որ ինքնաճանաչութիւնը միտքերու վրայէն պիտի վերցնէր սոցիալութեան թանձր քողը եւ ուրոջ գիծերով նշանակուած օրէնքի մը գոյութեան պէտքը պիտի զգացուէր եւ այդ ալ շատ հեռուար ապագայի վերապահուած չ'էր:

1849 թուականին, երբ ամիրայական նշանաւոր գերդատան մը արքունի փոյգըրանոցի գործակալութեանէն զրկուեցաւ, առնոց տեղ երեւցաւ Պէդեան Ամիրայ, իբր նոր տեսուչ փոյգըրանոցի: Պէդեանի պաշտօնաւարութեան առաջին տարիներէն իսկ

տարածուիլ սկսաւ իր մարդասիրութեան համբաւը, եւ յաջա տէրութեան սիրելի լինելով, շատ մը առիթներու մէջ ալ հայ ազգին ձայնը սիրող կառավարութեան լսելի ընելու եւ փոխադարձ յարաբերութեանց կապերը ամրապնդելու ջանաց:

Անոր շնորհիւ էր՝ որ Սուլթան Մահմուտի եւ անոր որդւոյն Մէճիտի թագաւորութիւնը, ընդհանրապէս թուրքահպատակ բոլոր քրիստոնէից համար ազատութեան ու երջանկութեան գարագլուխ մը եղաւ. որովհետեւ այդ առիթներն էր որ հարկ տեսնուած էր նոր օրէնքով մը վերջ դնել հպատակ ազգաց եւ ժողովրդոց անուրոշ ու տարտամ կացութեան արքունի հրովարտակի մը հիման վրայ հաստատելով Թուրքիան:

Երբեք Պատրիարք եւ Ամիրայ եւ երբեք ժողովուրդ եւ Ամիրայ անընդհատ իրարու գէժ ընդհարման մէջ լինելով, Թուրքիայի հաստատութիւնը նշանակելի արգիւնք մը արտադրած չէ. սակայն երկուստեք հասկցուած է թէ առանց մին միւսին ոչինչ է եւ այդ անել ուղին հարթելու միջոցներուն վրայ մտածուած՝ եւ 27 անձերէ բաղկացեալ ժողովի մը կազմակերպութիւնն է եղած, նոյնպէս արքունի հրովարտակալ:

Պատրիարքական աթոռը թափուր էր, հիմակ իրարու ձեռքէ իւրելու շարժումները դադարած էին, որովհետեւ հետզհետէ շատցած էր ժողովրդի պահանջատեղութիւնը եւ արժանիքները զանազանելու կարողութիւնը:

Իզմիրի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոս բազմեցաւ այն գահուն վրայ, որ այլ եւս իրաւամբ փշաղից կը կոչուէր, որովհետեւ նա ալ Ամիրա-ժողովրդական յարաբերութիւնները խաղաղ վիճակի մը վերածել չ'կարողացաւ, առ ի չ'դոյէ ժամանակին պահանջմանց համաձայն պատրաստուած կանոնագրի մը:

Ազգային ժողովներու ձեռք փոխելու հարկը տեսնուած էր, եւ այնպէս եղաւ 1847 ին: Հոգեւոր անունով 14 եկեղեցականներէ եւ Գերագոյն անունով 20 աշխարհականներէ երկու ժողովներու կազմակերպութիւնը տեղի տնեցաւ, քիչ մը աւելի կատարելագործեալ բազմամարմն 27ներու ժողովին:

Մատթէոս Պատրիարք ձեռքերը ծալած նստելու վարժուած մէկը չ'էր. նորուոր եւ օգտակար ձեռնարկներով կ'օժտէր

հայ ազգը: Ընկերութիւններ կը կազմէր, թանգարաններ կը հաստատէր, Հայաստան անուն պաշտօնական օրագրի մը հրատարակութիւնը կ'սկսէր, որ յետոյ 1852ին Մաւիս կոչուեցաւ: Ճեմարանը՝ որ արքունական հիւանդանոցի տեղ կը ծառայէր, դարձեալ վարժարանի կը վերածէր եւ այս ամէն ջանքերու շնորհիւ քիչ ատենէն հայ ազգին մէջ զարգացած եւ բանիբուն երիտասարդութիւն մը կը հասնէր, ինչպէս էին, Նիկողայոս Պաշեան, Գրիգոր Օսեան, Ռուպիկեան, Աղաթօն, Սեդրիկեան եւ այլք, որոց ձեռքով 1860ին խմբագրուեցաւ Ազգ. Սահմանագրութեան կանոնագիրը, եւ Ադրիանուպոլսեցի Սարգիս Եպիսկոպոսի Պատրիարքութեան օրով վաւերացուեցաւ տէրութեան կողմէ:

Սահմանագրութիւնը թէ՛ իր կատարելութեան հասած չէր, սակայն անոր հաստատութիւնը գլխաւոր միջոց մը եղաւ մեր ազգին համար, Օսմ. Պետութեան մէջ օրինապէս մինչեւ մէկ աստիճան ինքնավարութեամբ ապրելու:

Միապետական կառավարութեան մը ափին մէջ ապրող ժողովրդի մը համար, Սահմանագրութեան հաստատութիւնը ինչ արժէք ունենայլը բացատրելու հարկ չկայ. անոր իսկապէս մեծ արժէքին համար է որ վերաքննութեան անունին տակ դրուած կտրատել անդամհատել եւ ոչնչացնել կ'ուզուի դաւադիրներու կողմէ: Հիմա մեզ կը մնայ գիտնալ թէ, 40-50 տարիներու զարգացում մը հնոյն վրայ աւելցնել վերջ, ինչ կերպ կը վերաբերուինք գէպի Սահմանագրութիւնը. ի՞նչ ձեւ ունին ժողովական ու ժողովրդական յարաբերութիւններն այլ եւ այլ կեդրոններու մէջ, ուր հայերը կ'ապրին, եւ ի՞նչ ձեւ պէտք է ունենան:

Ահաւասիկ ինչդիր մը, որով պէտք է զբաղիլ մեր առաջիկայ թիւերով, եզրապատահայոց համար շահեկանութենէ զուրկ չլինելուն համար, որովհետեւ միջավայրը անոնց լայնարձակ միջոցներ կ'ընծայէ պահպանելու համար այսօր, ինչ որ կէս դարի չափ առաջ չիտուած եւ մէջտեղ դրուած է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն իսկին քաշուած հեռագրէ մը կը տեղեկանանք թէ՛ Սուլթանը Իրասէ մը հրատարակած է, որով կ'արտօնէ Հայոց Պատրիարքարանը, ըստ հնաւանդ սովորութեան Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան ձեռնարկել: Պատրիարքարանի համար աւսիկայ մեծ յաղթանակ մ'է, կ'ըսուի, որովհետեւ երեք տարիէ ի վեր առկախ մնացած էր:

— Ժամանակն է հարցնել Սուլթանին թէ այդ ընտրութեան ձեռնարկելու համար նոր Իրասէ մը հանելու աւելորդ յոգնութեան պէտքը կ'ար, քանի որ ընտրութիւնը արդէն երեք տարի առաջ կատարուած էր օրինաւորապէս, Ալէքսանդրեան Սրբազանին մասն արժանաւոր Եպիսկոպոսի մը վրայ: Եթէ պահ մը նոր ընտրութեան առաջարկը ընդունինք իսկ, ի՞նչ ապահովութիւն կայ թէ ազգին սիրած և ընտրած անձը Ալէքսանդրեան Սրբազանի բազմին չ'պիտի արժանանայ Պոլսի կամ այլուր սպասելով:

Կը վախնանք թէ այս ընտրութիւնն ալ Օրմանեանի պատրիարքական ընտրութեան ձեռնարկի պիտի համապատասխանէ: Ծ. Խ.

Շարժումէն կը քաղենք հետեւեալը.

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին Ատրիէէն ուղղուած թէղթերէնքու իմաստին համաձայն, Ռ. Պէրպէրեան էֆէնտիի վարժարանին գոյութիւնը աւելորդ կը համարուի եղեր, Սուլթանին հաւատարիմ հպատակ չի ճանչցուած լինելուն համար!!!:

Դարձեալ Գ. Եղնիկ եպիսկոպոս Ապահունոյ համար պաշտօնավարութենէ դադարում կը պահանջուի, իր քարոզներուն մէջ հակառակ կառավարութեան աննպատակներով թիւնները շարունակելուն պատճառաւ: Ռոտոսթոյի առաջնորդ Յովսէփ Եպիսկոպոսի գրպանէն Որբոց հանգանակութեան ցուցակ մը գտնուած լինելուն համար, դատաստանի ներքեւ առնուիլ որոշուած է:

Քաղ. ժողովը վերոյիշեալ թէղթերէնքուն պատասխանած է և ակնարկուած երեք անձնաւորութիւնը ներկայանալով Քաղ. ժողովին հարկ եղած բացատրութիւնները սուած են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եղեհրականութիւնը Կ. Պոլսոյ մէջ. — Մինչև հիմա ելեքորականութեան գործածութիւնը խստիւ արգելուած էր: Պաշտօնակայ մը անուշադրութեամբ եթէ նորին Բարձրութեան առջև ելեքորականութիւն բառը արտասանէր, իւր գիրքը ապահովաբար վտանգած պիտի ըլլար, եթէ ոչ իւր գլուխը: Հիմա սակայն, Սուլթանին տրամադրութիւնները Սպանիացիի մը շնորհիւ բոլորովին փոխուած են: Այս Սպանիացիին կրկէս (cirque) մը հաստատած էր Պոլսոյ մէջ, ուր տեղաւորած էր նաև Սիլեհնաքոլիումը (չարժուն տեսարաններ) մը. տեղական իշխանութիւնները ելեքորականութեան անունին պատճառաւ արգելեցին զայն և կըրկէսին տէրը իւր գեղատանին միջամտութիւնը խնդրեց:

Վարպետ գիւնապետը ունկնդրու-

թեան մը միջոցին այն աստիճան գովեց Սիլեհնաքոլիումին հրաշալիքները, որ Սուլթանը (Commandeur des Croyants) հետաքրքրուած, իսկոյն Սպանիացիին ու գործիքը պալատ բերել տուաւ: Եւրոպայի գլխաւոր քաղաքներու տեսարանները այնքան հետաքրքրեցին Սուլթանը, որ առատ նուէրներով վարձատրեց Սպանիացիին և արտօնեց կրկէսը ելեքորականութեամբ լուստորելու: Ահա այս կերպով առաջին անգամ ըլլալով ելեքորականութիւնը մուտ գտաւ ի Պոլսի:

— Գրական և Ռուսիա. — Մ. Տէլքասէի Ս. Բեթերսպուրկ այցելութիւնը, որ եւրոպական թերթերուն օրուան նիւթն եղած է, սկզբունքով որոշուած էր շատոնց, ինչպէս կը գրէ Տէյլի Նիզի Փարիզի թղթակիցը: Տէլքասէ սակայն խորհեցաւ թէ աւելի լաւ կը լինի ճամբորդութիւնը յետաձգել մինչև խաղաղութեան Վեհաժողովի փակումը: Շատ մը պատճառներ կային այս այցելութեան Օգոստոսի կէսէն առաջ տեղի ունենալուն: Ռուսական դահլիճին արտնդութիւն պատճառովն ընդ մին է Սերպիան, կը թուի թէ Միլան թագաւորը գրգռուած է երբեակ դաշնակցութենէն որպէս զի երբեակ զինակցութիւնը յանդուգն ձեռնարկի մը մղուի Գերմանիոյ և Սերպիոյ դէմ: Գերմանիա իբր երբեակ զինակցութեան անգամ, պարտաւոր է հսկել Պալքանեան գործերուն և չի կրնար անտարբեր մնալ որ Ռուսիա իր հետն ունենալով Ֆրանսան այդ գործերը կարգադրէ ի վրաս գերմանական շահուց: Սակայն միայն Սերպիան չէ հոգ պատճառողը Ռուսիոյ դահլիճին, ուր Տէլքասէ պէտքը զգաց այցելութիւն մը տալու Կոնստանտնուպոլիսի և Չարի տեսութիւնները ու նպատակները հասկնալու: այս տեսակ այցելութեան մը շատ մը շարժառիթներ կան հիմա. ուսական դաշնակցութիւնը շատ մը հարուած կերած է ընկերվարականներէ, որոնք կը նախընտրեն Գերմանիոյ և Անգլիոյ բարեկամութիւնը. նոյն իսկ պահպանողականք չեն դադարը յարձակումներ ընել: Բաց աստի կայ Չինական խնդիրն ուրիշ պիտի ծագի շատ մ'ուրիշ կարեւոր և կնճռոտ խնդիրներ, կայ նաև Ճաբոնական խնդիրն: Եւ կարելի է օր մը ծագի հարաւափրիկեան խնդիր մը, որուն մէջ Ֆրանսա իբր տէր Մատակաւարի խիստ մեծ շահեր ունի: Անգին Հայիդիի խնդիր մ'ենա ծագելու վրայ է: Ասոնց ամենքն ալ առնչութիւն ունին ուղղակի Ֆրանսայի և անուղղակի կերպով ալ Ռուսիոյ շահուց հետ:

— Ռէնէ քաշուած Հավասի գործակալութեան հեռագրէ մը կը տեղեկանանք թէ երէկ Տրէյֆիւսի դատավարութիւնը սկսելու պահուն անձանթ մէկը Տրէյֆիւսի փաստաբան Պ. Լապոսիին կռնակէն ռէվոլվերով վիրաւորած և փախած է:

ԱՐՇԱԼՈՅՍը ձեռքէ կը ծախուի Շարա Ապտուլ-Աղիի սկիզբը, Ֆարմասի Օսմանի յէի քով ծխալաճաւ Տիար ԿԱՐՄՊԵՏ ԵՐՁԵՆԿԱՅԵԱՆԻ խանութը, հատը 20 փարայ ողջ:

ՄԱԶԵՐԴ

(ՀԵՏԵՒՈՂԱԲԱՐ)

Արտո՞ր սիրունիս. ձգե՛, խնդրեմ, անուշահոտ քիւրմերով եւ ուկիով շինուած փոփոխոյց աշխիւնով այդ գետը, մագեր, քո պաշտելի մարմնոյդ փայ, որ նախկին Բարեբեկի սիրունիկերէն շատ աւելի հրապուրիչ է:

Այն ասեմ գեղ հիացնալը պիտի դիտեմ եւ իմ սիրունար ակնքս պիտի կարծեմ ընդ երկնային սաղիներու նուագ մը, ապրտալը Վեպտաներու խորքերուն ընկերացած, երբ տեսնեմ որ այս շեղ ու ծրփծրփուն առագաստը իմ կիզիչ շունչս սակ կը բարձրանայ:

Պիտի բարդաւտեմ քո սիրուն կիսաւերկ ուներդ, քո միակեանք գեղեցիկ ուներդ, Արեւելի անհունաքեանց ա՛յն ժամուն, ուր անքաղ արշապոյսը կը ցանկ իւր անքիծ ապիսակաքիւնները. այն ասեմ պիտի քոյլ սաւ գոյիս, որ մագերոյ խորքայոց պէտք մէջ կորսուի եւ մնայ հոն երկար ժամանակ, միկեր որ մոռնալ այն եւս թէ ո՞ր կը գնուի. եւ երբ յանկարծ սրալիւնով ճակասս վերցնեմ ակնի, քուս ինձ ժպտուն ու գոյիչ մայրով մը «մի՛ մեկնիր»:

Այսպէս անուշ դանդաղութեամբ մը պիտի կարգես զիս քո շաղկապազոյն մագերովդ եւ ես ալ չ'պիտի փորձեմ փախելու եւ կրեմ այս նուիրական կապերը, գիտնալով որ խեղճութիւն մը պիտի ըլլար այս, որովհետեւ անյայտ եմ անոնի. մանաւանդ կը նախընտրեմ սիրոյ գաղջ քաղցով խրկարկուած տուրք բանքը, քան ցուրտ սաւառիկները:

ՄԵՏՄԻ

ՁԱԳԱՌԸ

Ո՛ւֆ: սա Ամերիկացի երկարագէտները. գիւրտի փորձանքներ չպիտի բերեն մեր քաղիւն ուղիւն . . .

Այս ճշմարտութիւնը հաստատելու համար, բաւական էր մտիկ ընել անցեալ օր Մահրուսա Պառի մէջ տեղի ունեցած երկու տաք պուրի խտրակցութիւնը խոսակցութիւնը, որ ի վերջոյ վէճի և ապա քիչ մնաց արձաւարտի պիտի յանգէր: Ահաւասիկ վէճին նիւթը:

Մին գնած է եղեր 450 զրուչի Ֆոկսիւրմ մը և միւսը 270 զրուչի, որ շատ մը առաւելութիւններ ունեցած ըլլալ կը կարծուի քան միւսը:

Եղանակներու և երկարականութեան հըմուտ անձի մը միջամտութիւնը ուր ուրեմն հանդարտեցուցած է մարտիկները և ապա փորձով հաստատուած, որ ստուգելու 270 զրուչից ֆոկսիւրմը շատ մը առաւելութիւններ ունի և սա գնուած է եղեր ԼԵՒՈՆ ԿԻԻՄԻՇԵԱՆԻ վաճառատունէն:

Հետեւեալը տեղույս Աղգային Առաջնորդարանին մատուցուած մտաւորապէս չորս հարիւր ստորագրութիւնք կրող հանրագրի պատճէնն է, որը մեր նախորդ թիւով խոստացած էինք հրատարակել:

ԳԱՀԻՐԷ՝ 6 Օգոստոս 1899

Տ. Մամբէ քահանայ Վարդանեան
Փոխ-Տեղապահ և Եպիսկոպոս
Քաղ. ժողովոյ Գաւառ. Վարչութեան
Արժանապատիւ Հայր,

Ստորագրեալներս, ժողովրդի զանազան խաւերու մէջ տիրող զգացումներու լաւատեղեակ, ներկայ գրութեամբ կուզանք Ձեր արժանապատուութեան ուշադրութեան ներկայելու Կ. Պոլսոյ Պատրիարք Օրմանեան Մաղաքի արքեպիսկոպոսին գէ՛մ տեղույս հայ գաղթականութեան մէջ ա-

առջ եկած ամբողջական և զայնուհետև հիմնական պատճառները, եւ խնդրելու որ դուր ալ կշռելով այդ պատճառներու անտիտելի օրինաւորութիւնը եւ պարագաներու արտակարգ ծանրութիւնը, հաճիք անօրինակ զարմանն, որպէս զի յարգուի ժողովրդի արդար կամքը:

Ներկայ դառն ժամանակներու մէջ, երբ մայր հայրենիքի հայրենական գէտ հալածանքներու վատթարագոյնը կը գործադրուի իբր արեւոյ կառավարութեան անյեղլի քաղաքականութիւնը, Հայերս օրուան Կ. Պոլսոյ Պատրիարքէն անկարելիին պահանջած պիտի ըլլայինք, եթէ անկէ սպասէինք ժողովրդի ցաւերու անմիջական եւ արմատական դարմանը եւ Հայաստանի կացութեան հիմնական փոփոխութիւնը եւ բարեկաւարութիւնը. — նոյնպէս մենք չատերէ պիտի նկատուէինք պահանջկոտ եւ Պատրիարքին բռնելիք սեփական ուղղութեան եւ ինքնուրոյն քաղաքականութեան գէտ զժողովրդէն յարուստող, եթէ անկէ պահանջէինք որ կատարուած ամէն մէկ զեղծումի եւ անիրաւութեան գէտ անվերջ ընթացող հանդիսանար, եթէ, մէկ խօսքով, բռնադատելիք Պատրիարքը քայլ առ քայլ հետեւելու Ներսէսի եւ Իգմիրիանի կորովի եւ անողոք քաղաքականութեանը: Իրականութեան ա՛յն է սակայն որ Ազգը Օրմանեան Պատրիարքէն ո՛չ անկարելի բաներ պահանջեց եւ ո՛չ ալ անոր Պատրիարքութեան ակնկալեց անմիջական եւ չօչափելի բարեփոխում մը իր վիճակին Օրմանեան ազատ թողուեցաւ իր հայտարար քաղաքականութեանը մէջ որքան ժամանակ որ Ազգը կրցաւ հաւատալ թէ՛ եթէ իր Պատրիարքութեան օրով ժողովրդի կացութիւնը չմեղմանար, զէ՛ք չպիտի վատթարանար ալ. եւ թէ՛ եթէ մեր ազգային եւ կրօնական գոյութեան հիմերը կազմող դարաւոր իրաւունքներուն եւ առանձնաշնորհումներուն անաղարտ պահպանմանը համար նոր երաշխաւորութիւններ չկարենային ձեռք բերուիլ, զէ՛ք արդէն գոյութիւն ունեցող ազգային իրաւունքներէն եւ զանոնք երաշխաւորող պայմաններէն բան մը չպիտի վրայ տայինք:

Բայց ժամանակի փորձը եւ վերջին եղելու թիւնները ակնհաս ըստ անոր թէ՛ Ազգը իր այս կարի համար ակնկալութիւններուն մէջ ալ չարաչար սխալած էր. հետեւեալ որքան տարրական էին մեր այդ ակնկալութիւնները, այնքան ա՛յնքան մեծ է մեր յուսախաբութիւնը եւ սաստիկ մեր զայնուհետեւ երբ Օրմանեանի սարուկ քաղաքականութեան երեսէն մեր ազգային գործերը եւ իրաւունքները կը տեսնենք հասած ճշմարիտ գահալէժի մը բերանը՝ ուր ամէն բան գլորելու վերջացնելու համար իր մէկ վերջին հարուածը միայն կը պակսի, եւ այն ալ մօտալուտ է արդէն, եթէ չսթափինք այս ծանր ճգնաժամին ալ եւ առաջը չառնենք ազգակործան վտանգներ:

Օրմանեան Պատրիարքի արարքներուն ամենէն ծանրակշիւր անտարակոյս Ազգային Սահմանադրութեան «վերաբնութիւն» է, որը թէ՛ երկրի եւ թէ՛ արտասահմանի բովանդակ Հայութիւնը ծանր տագնապի եւ մղձաւանջի մէջ ձգած է: Ո՛չ միայն արտասահմանի եւ մինչեւ իսկ Տաճկաստանի բոլոր հայ թերթերէն, այլ եւ ուրիշ արժանահատ եւ ամենապատահելի աղբիւրներէ ալ գիտենք թէ՛ Օրմանեան, հակառակ իր ուխտին, «վերաբնութեան» անուան տակ կը ջանայ բուրդովին սպաննել ու շնչի տառը եւ ողին այնքան ծանր զոհաբերութիւններու արդիւնք եւ քառասնամայ կիրառութեամբ նուիրագործուած Ազգային Սահմանադրութեան, սրուն կը պարսի թուրքոյ Հայութիւնը իր քաղաքական, բնկերային եւ կրթական արդի զարգացումը Ամէն օր հասած նոր լուրերը կը հաստատեն թէ՛ Օրմանեան ամէն միջոց ու ճնշում ի գործ կը դնէ այդ ազգապետ գործը գահավթաւար իրականացնելու համար:

Կ. Պոլսոյ Պատրիարք իրաւունք չունի Սահմանադրութիւնը իր ուզածին պէս ծայրասելու եւ կտրատելու՝ վերաբնութեան պատուակին տակ: Վերաբնութիւն ընելու եւ գայն իբր կատարելով իրողութիւն ազգին առջեւ դնելու իրաւունքը չունին Կ. Պոլսոյ Կրօնական եւ Բարոյաքական ժողովներն ալ: Իսկ երբ նկատենք որ անոնց պաշտօնավարութեան օրինական շրջանն ալ արդէն չատնց լրացած է, այդպիսի ժողովներու

Պատրիար ին հետ կամ անոր ազդեցութեան ու ճնշման տակ եւ իրենց իրաւասութեանն զուրս կատարած գործերը մենք ո՛չ միայն օրինաւոր եւ պաշտօնական չենք կրնար համարել, այլ եւ բոլոր հայութեան նեա կը բողոքենք այդ սպօրինութիւններու գէտ: Սահմանադրութեան վերաբնութեան պէտքը, իրաւ, շատնց ճանչցուած եւ անոր որայ խօսուած է շատ անգամներ, բայց այդ վերաբնութիւնը պիտի ծառայէր Սահմանադրութիւնը վերածելու ազգին վարդապան եւ յառաջդիմութեան աւելի համապատասխան եւ աւելի նպատակարար գործիքի մը եւ ո՛չ թէ՛ գայն մերկացնելու ազգին պէտքերուն նպատակարար խոսակցութիւններէն: Ասկէ գատ, վերաբնութիւնը ընելու եւ վաւերացնելու իրաւասութիւնը կը վերաբերի մի՛ միայն Ազգային Երեսփոխանական ժողովին, եւ այն ալ ա՛յն պարագային երբ այդ ժողովն ունենայ օրինաւոր կազմութիւն եւ ապահովալ ըլլայ ամէն արտաքին միջամտութենէ եւ ազդեցութենէ:

Առանց այս պայմաններու վերաբնութիւնը պարզապէս Սահմանադրութեան ջնջումը կը նշանակէ, եւ մենք ստակումով կը նկատենք այդպիսի պիտական հարուածի մը, այն ալ Պատրիարքի մը մեղսակցութեամբ:

Օրմանեանի ձեռքով կատարուած խոշոր զեղծումներէն մէկն ալ Կիրիկիոյ կաթողիկոսական ընտրութեան բեկանումն է, չնայելով որ այդ ընտրութիւնը օրինական տեսակէտէն ու եւ թեւորութիւն մը չէր ներկայացնէր: Օրմանեան՝ կառավարութեան նշու գործիք դարձած եւ ստորագրողով ազգային կենսական շահերը Սուլթանի կամքին, Կիրիկիոյ կարեւոր աթոռը զրկելով Ալէքսանդրեան որբազանի պէս արժանաւոր կաթողիկոսէ մը եւ գայն մատնեց անիշխանութեան, — որովհետեւ ընտրուած Կաթողիկոսը իբր աջալուրջ հովիւ իր արիւթեամբ եւ իր անկախ նկարագրով Դրան գործին չէր գար:

Սահմանադրութիւնը իրաւունք չէր տար Կ. Պոլսոյ Պատրիարքին Խառն ժողովոյ նստի մը մէջ կաթողիկոսական օրինաւոր ընտրութիւն մը բեկանելու: Այդ գործով թէ՛ Պատրիարքը եւ թէ՛ Խառն ժողովը Սահմանադրութեամբ զժողովը իրաւասութիւններէն զուրս ելած եւ բռնաբարում մը կատարած են, միայն Ազգային Երեսփոխանական ժողովն էր որ կրնար վճռել կատարուած կաթողիկոսական ընտրութեան օրինաւորութիւնը կամ ոչ, եւ հաստատել կամ բեկանել գայն: — Մենք այս հանրագրով չուզելով արձագանգ հանդիսանալ նոյն իսկ այնպիսի կասկածներու եւ կարծիքներու որոնք ճշմարտութեան ամէն պայմանները կը թուին ներկայացնել եւ չատերու կողմէ մէջ կը բերուին իբր անվիճելի իրողութիւններ, լուրեւայն կ'անցնինք Կիրիկիոյ աթոռին վերաբնութեամբ այն բոլոր գաղտնի գիտումները եւ դաւեր որոնք կը վերագրուին Օրմանեան Պատրիարքին:

Օտար որբանոցներու փակման խնդրին մէջ ալ Օրմանեան ըստ վկայութեան Հայոց լուսագոյն բարեկամներու եւ ըստ պաշտօնական տեղեկագրութեանց, թուրք կառավարութեան գիտումներուն գործիք եղած է, պատճառ դառնալով զուտ մարդասիրական նպատակով լացուած կարգ մը որբանոցներուն փակմանը (որոնք յետոյ անգլիական կառավարութեան ազգու միջամտութեամբ միայն վերաբացուեցան): Օրմանեան գիտակցաբար այդ որբանոցները չփոթած էր հայի գնով մարդկային խղճեր գնողներու համարուն հիմնարկութիւններուն նեա, որոնք սակայն բաց կը մընային՝ Հայերէ՛ աւստրալիականապաշտպանութեան տեղու խոստումին շնորհիւ:

Օրմանեանի հակասահմանադրական եւ միասակար այս բոլոր արարքներէն վերջն ալ գրտնուէին թերեւս ոմանք որ ջանային արդարացնել իր քաղաքականութիւնը բռնելով թէ՛ այս ամէն ծանր գոհողութիւնները կը ծառայեն ամբողջութեամբ կառավարութեան հայահալած քաղաքականութիւնը երկրին մէջ: Բայց այդ արդարացումն ալ զէպրելը եկան հերքելու. Չարդերը, խաւերումները, որոնք առժամայէս դադրած էին վերսկսուեցան: — Մշոյ գաշտի եւ Բոնաչէնի վերջին զէպրերը ամենէն լուստեսներն ալ հիասթափութեան մասնեցնին:

Հիմա գանք Օրմանեանի ամենավերջին արարքին որ մասնաւորապէս արտասահմանի բոլոր Հայութեան զայնուհետեւ հրաւիրեց իր վրայ: Ձեր Արժանապատուութիւնը գիտէ թէ, ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս այստեղի հայ պալուսթը միթիւնկ մը գումարելով Լահէի Համաժողովին դիմեց Տաճկաստանի միւր հայրենակիցներուն վիճակին զարման մը հայցելու՝ խորհրդակցող Պետութիւններէն: Այդպիսի դիմումներ ընել ամբողջ արտասահմանի Հայութիւնը իրեն պարտքի եւ իրաւունքի սահմանին մէջ նկատեց. — եւ յիշուի, ո՛վ կրնայ ուրանալ ընդհանուր Հայութեան միջեւ գոյութիւն ունեցող ազգային միութեան եւ շահերու անխզելի կապը. եւ յետոյ, ո՛վ չգիտեր թէ՛ Թուրքիոյ Հայերը ամէն միջոցներէ գուրկ են այսպիսի աւթով մը իրենց ձայնը բարձրացնելու. ուրեմն, քանի որ Թուրքիոյ հայերու ձայնը խեղդուած էր, բնական չէ՞ որ արտասահմանի իրենց եղբայրները իրենց անուսով ձայն բարձրացնէին: Ասկէ գատ, ո՛վ կրնայ ուրանալ եւ անտեսել թէ՛, ա՛յն օրէն երբ Հայերը Սահմանադրութեան եւ Պետիւն կատարած գիտումներով Եւրոպայի առջեւ դրին իրենց տառապանքները, այն օրէն երբ եւրոպական Պետութիւնները իրենք ընդունեցին հայկական խնդրի միջազգային հանգամանքը, ա՛յն օրէն մասնաւորապէս երբ 300,000 հայեր թուրքերու եւ Բիւրստերու ձեռքով խողովուրդեցան Հայաստանի եւ Կիրիկիոյ մէջ եւ նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ մինչեւ մեր Պատրիարքարանի պատերուն տակը, ո՛վ կրնայ ուրանալ թէ՛ այլ եւս հայ ազգին եւ Օսմանեան Պետութեան միջեւ յարաբերութիւնները ա՛յն չին եւ չեն կրնար ըլլալ ինչ որ էին Ներսէս Պատրիարքէն առաջ:

Իրերու այսպիսի կացութեան մը բնական հետեւանքն էր որ արտասահմանի հայերը պարտականութիւն ստանձնէին այդ դիմումը ընելու Համաժողովին: Իսկ Օրմանեան՝ Համաժողովին ուղղած իր համբաւաւոր հեռագրովը մեզ այդ անվիճելի իրաւունքէն զուրկ յայտարարած է. ասով արհամարհած է արտասահմանի Հայութիւնը եւ մեր ազգային բարոյական օտարաց առջեւ նուաստացնող ընթացք ունեցած է: Օրմանեան այդ հեռագրով ուրացած է Բիւստոստեայ Եւրոպային դիմելու հարկը, ուրացած է եւրոպական միջամտութեան մը անհրաժեշտութիւնը, առանց որոյ երբեք արմատական դարման մը չկրնար գտնուիլ տաճկահայ ժողովրդի տառապանքներուն:

Ինչպէս կը տեսնէք, Արժանապատու Հայր, Օրմանեան իր վերագրեալ արարքներով՝

1. Ազգային Սահմանադրութիւնը բռնաբարած է եւ հիմա ալ բաց է ի բաց անոր ջնջումին կը հետամտի:
2. Կիրիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր իրաւունքները վտանգած է:
3. Որբերու եւ այրիներու նուիրական գատնին գէտ դաւաճանած է:
4. Արտասահմանի Հայութիւնը արհամարհած ու նախատած է, անոր ամենէն ազնիւ մէկ ձեռնարկը խափանելու աշխատելով:

Ահա ասոնք են, Արժանապատու Հայր, մեր ժողովրդի զայնուհետեւ գլխաւոր հիմունքը եւ պատճառները:

Ինչպէս Պուլկարիոյ, նոյնպէս եւ Աղեքսանդրիոյ մէջ երկար ժամանակէ ի վեր վերջնականապէս զարգեցուցուած ըլլալով արդէն՝ Օրմանեանի անուան յիշատակութիւնը, ակնհաս է որ Գահիրէի ժողովուրդն ալ վերագրեալ ծանր հանգամանքներու տակ չպիտի հանդուրժէ այլ եւս լսել Օրմանեանի անուսը Ս. Եկեղեցիին մէջ:

Ձեր կարծիք որ քաղաքին մէջ գտնուի հայ մը, որ փափագ ու տրամադրութիւն ունենայ Լիւկեղեցոյ արարողութիւններու վեհութիւնը ազմուկներով խանդարելու եւ սակայն, եթէ յիշատակութիւնը չի դադարի անմիջապէս, տարակոյս չի կայ որ կարող են տեղի ունենալ խել մը տեսիլներ գէպեր եւ աղմուկներ, որոնց ամբողջ պատասխանատուութիւնը յամենայն դէպս, այժմէն պարտք կը համարիմք նախօրոք յայտարարել Ձեզ՝ որ մեր վրայ չպիտի ծանրանայ:

Ընդունեցէք Արժանապատու Հայր, մեր խորին յարգանաց հաւատարմութիւնը:

Ի գիմաց Գահիրէի հայ հասարակութեան Ասորագրութիւններ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԱՐՄԱՆՏ, Յ. Ս.—Ձեր նամակը եւ ներփակեալը ստացանք։ Ստացր նամակաւ գրկու ե-ցաւ ձեզ։ Ձեր քաջախիտանայ համար անհուն շնորհակալիք։

ԶԱԿԱԶԻԿ, Եղբ, ձ.—Ձեր զրկածները գանձեցինք։ Ստացանք զրկու եղան նամակաւ։ Մանաւոր շնորհակալութիւն ձեր գր-րածներուն համար։

» Ա. Ա.—Տ. Ե. ձ. ձեր ստացը պիտի հասցնեն ձեզ։

ԱՍՈՒՐ, Շէֆ ար կառ.—Ստացանք Տ Ա. Փ. Է, եւ ստացը անոր յանձնուեցաւ։

ԳԱԶԻՐԷ, Ս. Մ.—Շնորհակալիք ձեր նամակին համար։

» Ղ. Ս.—Ստացանք ձեր նամակը։ Չա-փազանց գովեստներէ չինք պիտի թիր։

» Կ. Տ.—Ձեր գրածը ուրիշ յարմար առ-թիւ։ Շարունակեցէ՛ք։

» Եղ. Ե. Բ. Բնիկ։ Ս. Մ՛ Կ. Ե. Ն. Ս. Հ. Փ. Մ. Ս. Օ. Շ. Եղ. Տիգ. Գ.ձ.—Շնոր-հակալեօք ստացուած է։

ՊԷՆԶԱ, Գ. Ս.—Ձեր փախաբին համաձայն։ ԳԱՅԻՐ-ՇԷՅՍ, Ս. Ս.—Թող այնպէս բլլայ։ ԹԱՆԹԱ, Ղ. Մ.—Մինք ալ ճիշդ այդ ընկը կը մը-տածէինք։

ԾԻՇԱՂՆԵՐՈՒ ՀԱԽԱՔԱՇՈՅ

Երկու փաստաբաններ.
Տեսակցութեան մը մէջ բաղաձայնութեան սահմանէն շեղելով, նախասական խօսքերու կը վերածեն իրենց տեսակցութիւնը։
Երոզ մը միջամտելով.
—Շարունակեցիք պարոններ, եւ երբեք մի՛ վախճա՛ք վասն զի փաստաբանները կը նմանին մկրտի զոյգ մը բերաններուն. նրան իրարու զար-նուից երբեք զիրար չեն վնասեր, բայց վա՛յ անոր որ անոնց մէջ տեղ կ'իյնայ։

Վարդապետն ու Տեհերը.
Պատահումին առջեւ նստած դուրսը կը դի-տելին։
Փողոցէն անցնող գեղանի օրիորդ մը՝ որ իւր կուրծին վրայ արամանդակուա խաչ մը կը կրէր, պատահաւ կ'ըլլայ լուսքիւնը խզելու։
—Կը տեսնե՞ս, Հայր սուրբ, կ'ըսէ, Տեհերը, ինչ փայլուն ու գեղեցիկ խաչ մ'է։
—Ձե՞ս դիտեր սակայն, կը պատասխանէ վար-դապետը, որ այդ խաչը կրողը աւելի գեղեցիկ է։
—Այդ երկուեան օ՞րջ ունենայ կ'ուզէիր, կու-գայ ձայն մը դրան ետեւէն, ուր տեղ սուրն կը պատահար Սարկուազը։

ԳՐԻԳՈՐ ՊԷՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱՎԱՐ
Պագար Մուրուր Թիւ 39

Պատիւ զե՛նի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւղէճինէն փոխադրած է ի Պագար Մու-րուր Թրանսական նորաձեւութեանց յար եւ նը-ման կոչիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գո՛հ բրած է իրեն զի-մող Պատ. յաճախորդներն։
Իւր դորձածած ապրանքներու առկուտու-թիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու։
Իրեն եղած յանձնարարութիւնը ո՛չ միայն չափաւոր գիներով, այլ եւ փութով եւ մեծ խնա-մով կը պատրաստուին։
Գինեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասրը) ազատ մնալ։ 1—24

ԼԵԻՈՆ ԿԻՍԻՒԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՅՈՇՈՎՐԱԾ

ԳԱԶԻՐԷ, — Մուսի փողոց, — ԳԱԶԻՐԷ
Ս. Ե. Ս. Արեւիկայի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնաօրի ընտիր տե-սակէ բանախելներու մեծ մթերք։
ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈ՛Ն եւ պիտի գտնէք ամէն ճա-շակի յարմար զանազան տեսակ արանց եւ կա-նանց ժամացոյցներ, ազամանդազարդ, ոսկի, աք-ծաք եւ ցիւքի։
Փրանսական եւ ամերիկեան ապրանքաց ամե-նաբնտիր տեսակներէն զարդեղէններ, շրթաներ, օղեր, մատանիներ եւ այլն։
Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի միջոցաւ։

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ

3—50

ՏՐՈՒՄԻՍ ԺՈՐժ Փ. ԷՎԼԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ
Ապրիլ, Շարե Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հա-սակի յարմար ընտիր ապրանքներով կեզծ ախրաններ։
Կը զաղբեցնէ վայրկեանապէս ախրայի ցա-ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն։
Կը բուժէ լինաներու եւ բերնի ամեն տե-սակ հիւանդութիւններն։
Իր լեցուցած ախրաններուն առկուտու-թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ։ 5—10

Ա Ջ Դ

Տիկին Սօֆիկ Ազգապետեան, մանկարարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ՝ ընա-կութիւնը Գա՛նիէ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատ-րաստ է իւր խնամքները տալ իրեն պէտք ունե-ցողներուն։
Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղճամիտ աշխատութիւնը զինքը քաղաքիս ա-ռաջնակարգ մանկարարներու կարգը կանցընեն։
Դիմել Պէն-էլ-Մուրէն, Գուրուսֆիշ փողոց Թիւ 53. 5—6

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷՅ - ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՅ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բասորդ) սեւ, շաղանակագոյն եւ ոսկեգոյն։
Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող։
Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է։

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերաթափութիւնը կը դաղբեցնէ եւ մա-շերը կը ճոխացնէ։ Նմանապէս ճաղատ (տալ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճա-ղատ գլուխներու վրայ փորձուած է հիա-նայի արդիւնք տեսնուած է։ Շիշը 8 դրշ-ողջ (2 ֆրանք)։

Բուտրա՝ սքանչելի տեսակէն, որը միան-գամայն մարմինը քրտինքիսպէս պերծ կը պահէ։

ձերմկցնող ջուր շիշով, որը մարմնայն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու։ Եգիպտոսի մէջ միակը։

Հոգանքի ջուր, մարմնոյթէ՛ փափկութիւն եւ թէ՛ անուշահոտութիւն կուտայ։

Ակուայի փոշի եւ ջուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող։

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու-րոնց դիտու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են։

Օտար երկիրներէ եւ գաւառներէ կան-խիկ դրամով եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

Սոյն ջրերէն կարելի է գտնել նաև Ապ-տին, Տայրէի Սանիէի գլուխայ Պագար Թիւր/ վաճառատունը։

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխա-նակենք բոլոր ողջաց գործածած նամա-կաղբոյնները։ 1—8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱԶԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ սպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝
Շրջաբերականներ, Մահազդեր, Հրաշխագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Բնկերութեանց եւ վաճառականներու տպագրական առեւտրի պիտոյցներ։
Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագնութեան եւ գներու չափաւորութեան մէջ։
Եգիպտոսի ու եւ քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին։

Տպագրութիւն Ս. ԴԱՐԻՆԵԱՆ

Le Gérant, Dr A. S. HAGOPIAN